

Մ. Ապրեսյան

Մ. Կարապետյան

Իրավագիտական խոսույթի հատկանիշները

Abstract

The present paper discusses some distinctive features of legal discourse focusing on major strategies used in oral as well as written speech. It also refers to some important issues in legal written discourse, particularly legal documents possessing a unique syntactical structure, that needs to be explored in future.

Key words: legal discourse, legal documents, oral and written speech.

Ամփոփում

Հոդվածը քննարկում է իրավաբանական խոսույթի որոշ առանձնահատկություններ՝ ուշադրությունը կենտրոնացնելով որոշ ռազմավարությունների վրա, որոնք կիրառվում են թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում: Այն նաև անդրադառնում է իրավաբանական պրակտիկայում վճռորոշ դեր կատարող իրավաբանական փաստաթղթերին, որոնց յուրահատուկ շարահյուսական կառուցվածքը լուրջ հետազոտության կարիք ունի:

Բանալի բառեր: իրավաբանական խոսույթ, իրավաբանական փաստաթղթեր, խոսքային ռազմավարություն

Резюме

В статье представляются некоторые особенности юридического дискурса, как в устной, так и в письменной речи. В ней также обсуждается специфичность синтаксических конструкций, присущих важным документам, обладающим юридическую силу, высказывается предположение об их серьезном лингвистическом исследовании.

Ключевые слова: юридический дискурс, юридические документы, речевые стратегии.

Ներկայումս այն հումանիտար գիտակարգերի ուշադրությունը, որոնց առարկան ուղիղ կամ անուղղակի կերպով առնչվում է լեզվի գործունեությանը՝ լեզվաբանություն, գրականագիտություն, իմաստաբանություն, սոցիոլոգիա, փիլիսոփայություն, ծագումնաբանություն, մարդաբանություն, ուղղված է խոսույթի

ուսումնասիրությանը, արտահայտման ձևերին, կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտմանը: Այս հայեցակարգում մի շարք մեկնաբանությունների և դիտարկումների առկայությունը վկայում է գիտական լեզվի ողջ հարացույցի զարգացման մեջ խոսույթի մեծ նշանակություն ունենալու մասին:

Ինչպես հայտնի է, գոյություն չունի խոսույթի ճշգրիտ և համընդհանուր այնպիսի սահմանում, որն ընդգրկում է նրա կիրառման բոլոր ձևերը: Հնարավոր է, որ դա է նպաստել վերջին տասնամյակում այդ տերմինի լայն տարածմանը. դիտարկումների բազմազանությունը հնարավորություն է տալիս փոփոխելու խոսքի, տեքստի, երկխոսության, ոճի, լեզվի մասին ավելի ավանդական պատկերացումները:

Խոսույթի սահմանման վերաբերյալ հիմնական լեզվաբանական մոտեցումները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Հաղորդակցական՝ ֆունկցիոնալ /коммуникативный-функциональный/ մոտեցումը տալիս է խոսույթի գործառական սահմանումը որպես <<լեզվի ցանկացած կիրառում>>(Brown, Yule, 1983: 1): Այս մոտեցումը ենթադրում է խոսույթի գործառույթների վերլուծություն՝ պայմանավորված լայն սոցիոմշակութային համատեքստում լեզվի գործառույթների ուսումնասիրությամբ:

Շարահյուսական կառուցվածքային /структурно-синтаксический/ մոտեցումը սահմանում է խոսույթը որպես << նախադասության կամ բառակապակցության մակարդակից բարձր լեզու>>(Stubbs, 1983: 1): Խոսույթ ասելիս նկատի են ունենում երկու կամ երեք նախադասություն, որոնք միմյանց հետ կապված են իմաստային կապով (գերարտահայտչական միություն, բարդ շարահյուսական ամբողջություն, պարբերություն), ընդ որում կապը դիտարկվում է որպես խոսույթի հիմնական հատկանիշներից մեկը (Звегинцев, 1976: 170):

Ոճակակառուցվածքային /структурно-стилистический/ մոտեցում. խոսույթը դիտարկվում է որպես խոսակցական լեզվի ոչ տեքստային կազմակերպում, որը բնութագրվում է խոսքի անհավասարաչափ բաժանմամբ, որտեղ գերիշխում են ասոցիատիվ կապերը, հանպատրաստիությունն ու բարձր համատեքստայնությունը (Сиротинина, 1994):

Սոցիալ-պրագմատիկ /социально-прагматический/ մոտեցում. խոսույթը որպես տեքստ՝ կախված շփման իրավիճակից /Арутюнова, 1990; Карасик, 1998/, կամ

սոցիալական կամ գաղափարական սահմանափակմամբ արտահայտման տեսակ է, օրինակ ֆեմինիստական խոսույթ /Серно, 1999/, կամ, ըստ Ստեպանովի, «<լեզուն լեզվում>>խոսույթը, սակայն, որը ներկայացված է հատուկ սոցիալական տվյալի տեսքով, որն ունի իր տեքստերը: «<Բոլոր տեսակի խոսույթների շրջանակներում գործում են հոմանիշների գործածման սեփական կանոնները, իսկության կանոնները, վարվելակարգը. դա «<հնարավոր /այլընտրանքային/ աշխարհ է>>: Ցանկացած խոսույթ «<հնարավոր աշխարհներից>> մեկն է: Խոսույթի բուն երևույթը, նրա հնարավորությունը «<Լեզուն՝ ոգու տուն>> և հայտնի «<Լեզուն՝ գոյության տուն>>թեզիսների ապացույցն է»:(Степанов, 1995: 38):

Յուրաքանչյուր սոցիալական խումբ ունի իրեն բնորոշ խոսույթը, իսկ խոսույթի հասկացությունը իր մեջ ներառում է ինչպես հասցեատիրոջ, այնպես էլ հասցեագրողի սոցիալական կարգավիճակի հասկացություն, քանի որ յուրաքանչյուր արտահայտություն, այլ բնութագրումների հետ մեկտեղ, պարունակում է նաև խոսակցի մասին սոցիալական բնույթի արժեքավոր տեղեկություն: Սուբյեկտա-սուբյեկտային հարաբերությունները այդ դեպքում դիտարկվում են որպես դերային, իսկ սոցիալական դերերը դիտվում են որպես սոցիալական վարքի նմուշ: Լեզվական անհատը համաչափ և անհամաչափ հարաբերություններում կարող է ունենալ մշտական և փոփոխական դերեր կամ այլ կերպ ասած, կարգավիճակային, դիրքային և իրավիճակային:

Խոսույթի ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի իրավաբանական խոսույթը:

Իրավաբանական հաղորդակցությունը ավանդաբար իրենից ներկայացնում է կարգավիճակաձիսական /статусно-ритуальный/ ինստիտուցիոնալ խոսույթ (Карасик, 2002), և հաշվի առնելով կարգավիճակա-դերային /статусно-ролевые/ և իրավիճակա-հաղորդակցային /ситуативно-коммуникативные/բնութագիրները՝ իրավական հարաբերությունների ոլորտում հաղորդակցման մասնակիցներին կարելի է սահմանազատել սուբյեկտի մեկնաբանական նորմերից բխող պատկերացումների հիման վրա: Այս դիրքորոշումը բնորոշվում է հատուկ գիտելիքների առկայությամբ, այդ թվում նաև իրավաբանական ենթալեզվի, որը տեքստում արտացոլում է արժեքավոր կողմնորոշումներ, գաղափարներ և հայացքներ, որոնք բնորոշ են այդ

ուրրտի մասնագետներին, հատուկ են այդ սոցիալական կարգավիճակին և դերին: Հետևաբար, կարելի է խոսել վարքի մոդելի մասին, այդ թվում և խոսքային, այսպես կոչված «դիմակի»»: Այս կամ այն դիմակի առկայությունը մարդու մոտ մեծ մասամբ որոշում է նրա դիրքը իրադարձության ընկալման ժամանակ: Իրավագիտության ոլորտում հանդիպում են, որպես կանոն, երկու այդպիսի դիրքորոշումներ՝ «իրավաբան»/юрист/ և «ոչ իրավաբան»/неюрист/ (Кузнецова, 2002):

S. Գուբաևայի արդարացի հավաստմամբ, «իրավաբանների խոսքային վարքը բնորոշվում է մասնագիտական մտածողությամբ, և իրավաբանի կողմից կազմված յուրաքանչյուր տեքստում, այս կամ այն կերպ արտացոլվում է նրանց մասնագիտական լեզվամտածողական առարկայական, օպերացիոն և մետալեզվական պլանը: Ոչ իրավաբանների խոսքային վարքը հիմնված է գլխավորապես իրավական դաշտի և իրավական գործողությունների մասին սուբյեկտիվ պատկերացմամբ: «Ոչ մասնագետների խոսքը ենթարկվում է նշանակալի կարգավիճակային ազդեցության»(Губаева, 1994: 268): Ինչպես նշում է Ա.Ժալինսկին, ցանկացած իրավաբանական մասնագիտական գործունեության համար բնորոշ է իրավաբանի կողմից իրավական գիտելիքների իրականացումը իրավական խնդիրների լուծման ընթացքում: Այդ յուրահատկությունը և որոշում է իրավաբանի աշխատանքի բովանդակությունը, նրա ամբողջ մասնագիտական կարիերան (Жалинский, 1997):

Այսպիսով, իրավաբանը մարդու «դեմքերից» մեկն է, նրա դերերից մեկը: Դա մարդ է, որ «դիմակ» է կրում, որ փոխել է հաղորդակցման լեզու – ոճը, որը «նրան հնարավորություն է տալիս գործել որոշակի դաշտում, բայց, բացի այդ, իր հերթին այնպիսի սահմանափակումներ է դնում նրա առջև, ինչպիսին են, օրինակ, իրադարձությունների դիտարկումը միայն փաստերի տեսանկյունից և ոչ թե իրական ամբողջությամբ: (Кузнецова, 2002):

Դիտարկելով գործակալների և հաճախորդների փոխհարաբերությունները տվյալ հասարակական հաստատության շրջանակներում՝ ավելի սեղմ համատեքստում կարելի է նշել հետևյալ հաղորդակցական բնորոշ դերերը՝ օրենսդիր, իրավաբանական և ֆիզիկական անձինք, քննիչ, հետախուզվող, վկա, մեղադրող, պաշտպան, ատենակալներ, դատավոր: Դատական խոսույթը բազմաժանր է, և

դատական գործընթացի մասնակիցները բնութագրվում են դերերի առկայությամբ, որը ենթադրում է տեղեկատվության հավասար/պայմանագրային/ հավասարակշռված փոխանակում, ինչպես նաև անհավասար/անհավասարաչափ/ հարաբերություններ, որոնք հանդիսանում են ենթակայության կամ լրացուցիչ հարաբերություններ, ընդ որում դատավորը հանդես է գալիս որպես առաջնորդ, դատական գործընթացի մասնակիցների համար:

Իրավաբանական ժամանակագրության խոսույթը հանդիսանում է այն իրավիճակը, որը հատուկ է իրավաբանական երկխոսությանը, օրինակ, խորհրդարանական նիստերի սրահը օրինագծերի քննարկման ժամանակ (օրենսդրական գործունեություն), դատարանի դահլիճը, քննիչի աշխատասենյակը, իրավաբանական խորհրդատվությունը կոնկրետ իրավաբանական գործի հանգամանքների դիտարկման ժամանակ, կալանավայրը՝ պատիժը կրելու վայրը, իրավակիրառման գործունեություն: Գրավոր խոսույթը ներկայացված է տարբեր ժանրի տեքստերի լայն սպեկտրի տեսքով:

Դատական գործընթացի ժանրի հիմքում ընկած է կողմերի բանավեճը, որի ընթացքում մեղադրողը կամ պաշտպանը, արտահայտելով գործի վերաբերյալ իր դիրքորոշումը և լսարանին հավաստիացնելով ճշմարտացիության մեջ, տալիս է գործին առնչվող մի շարք գնահատականներ՝ սոցիալական նշանակության այս կամ այն տեսակի դիրքորոշումից ելնելով (որոշակի դիմակով): Տվյալ ըմբռնումը հնարավորություն է տալիս ներկայացնել գործը հոետորոկան շահավետ տեսանկյունից, կիրառել կոլեկտիվի ընդհանուր գիտելիքները, բողոքարկել արժեքների որոշակի կարգի դեմ և առաջացնել լսարանում անհրաժեշտ զգացմունքայնությունը՝ կիրառելով բնական լեզվի միավորների իմաստային հազեցվածությունը: Հետևաբար, կարևոր է ինչպես փաստարկների հավաքածուն, այնպես էլ համոզման տեխնիկան:

Իրավաբանական խոսույթում փաստարկման առանձնահատկությունը ոչ թե հասցեատիրոջ միատեսակ լինելն է, այլ հատկապես երրորդ կողմի դերը: Դատական նիստի ընթացքում փաստարկման ժամանակ հասցեատերը միշտ <<կրկնապատկվում է>>, եթե փաստարկը բերվում է հայցվորի կողմից, ապա հասցեատեր են դառնում պատասխանողը և դատավորը, եթե դատավորը ընթերցում

է դատարանի որոշումը, ապա այն, դե ֆակտո, ունի երկու հասցեատեր՝ հայցվորը և պատասխանողը: Առճակատման փուլում որպէս երրորդ կողմ հանդես է գալիս դատավորը: Փաստարկների գնահատումը նույնպէս միշտ երկկողմանի ուղղվածություն ունի:

Իրավաբանական հաղորդակցման նպատակն է սոցիալական համակարգի գործառնության կարգավորումը, հասարակական հարաբերությունների կարգավորումը, որոշակի ազատությունների և պատասխանատվությունների ամրապնդումը, հասարակական կյանքից կամայականության և անվերահսկելիության բացառումը, սոցիալական համակարգի համապատասխանեցման ապահովումը տիրող արժեքներին և գաղափարներին:

Իրավաբանական խոսույթի արժեքները արտահայտված են հիմնական հասկացություններում՝ օրենք, իրավունք, արդարություն: Նշված հասկացությունները հանդիսանում են հարաբերական կայուն մտավոր ձևավորումների մշակութային հաստատուն երևույթներ, որոնք մշտապէս առկա են/Степанов, 1997/:

Իրավաբանական խոսույթի ռազմավարությունները որոշվում են նրա մասնավոր նպատակներով, որոնք պայմանավորված են գործունեության ոլորտներով՝

- իրավական ոլորտում անմիջական գործունեություն՝ ա. կատարելագործել սահմանադրությունը և իրավաբանական պրակտիկան, որը ընդգրկում է բոլոր արժեքները, որոնք ստեղծված են իրավունքի ոլորտի մարդկանց կողմից, բ. իրականացնել վերահսկողությունը իրավաբանական նորմերի կատարման վրա, գ. զարգացնել հասարակության իրավական մշակույթը, որը ապահովում է անձի սոցիալիզացիան և անհատի իրավահավասար գործունեությունը;
- Ոչ իրավական բնույթի գործունեություն, որը կապված է իրավական գործողության ոլորտի հետ, մշակել, օրինակ, որոշ գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք արտացոլում են իրավական գաղափարներ, հայացքներ, զգացմունքներ և այլն: Այդ գործունեությունը անմիջականորեն չի մտնում իրավական խոսույթում, բայց իր գաղափարական բովանդակությամբ տեղ է գտնում նրանում: Այսպիսով,

ռադիոն, հեռուստատեսությունը, գրականությունը, գեղարվեստը, կինոն, լրագրությունը չեն առնչվում իրավական մշակույթին, բայց մշտապես լրացնում են նրա <<հիմնադրամը>>:

Այդպիսով, իրավաբանական խոսույթը կիրառելիս կարելի է առանձնացնել հետևյալ ռազմավարությունները՝ մեկնաբանող, կարգավորող, կարգավորիչ, վերահսկող, կազմակերպող:

Իրավաբանական խոսույթի ռազմավարությունները իրականացվում են գրավոր և բանավոր ժանրերում: Գրավոր ժանրերին են պատկանում՝ օրենսդրական ակտերը (օրենք, հրաման, հրահանգ, կանոնադրություն, օրենսգիրք), գործընթացային ակտերը (արձանագրություն, որոշում, մեղադրական եզրակացություն, վճիռ): Բանավոր ժանրերը ներառում են դատական խոսքը, հարցաքննությունը, կողմերի վիճաբանությունը: Լեզվաոճական տեսանկյունից իրավաբանական խոսույթի գրավոր և բանավոր ժանրերը ձևակերպվում են պաշտոնական-գործնական ոճի նորմերին համապատասխան:

Իրավաբանական խոսույթի նախադեպային տեքստերի թվին են պատկանում տարբեր իրավաբանական փաստաթղթերը, որոնք որոշիչ դեր են խաղում իրավաբանական պրակտիկայում՝ դրա իրականացման ցանկացած մակարդակում, քանի որ հանդիսանում են սուբյեկտիվ իրավունքի կիրառողի և իրավասուի կամքի կրողը, որը հաստատում է համապատասխան իրավաբանական փաստաթուղթը: Փաստաթուղթը իրականացնում է ոչ միայն տեղեկատվական գործառույթ, այլև արտահայտում է հեղինակի սոցիալ-պրագմատիկ դիրքորոշումը: Այս դեպքում իրավաբանական խոսույթի մասնակիցը ոչ միայն հեղինակն է /պրոֆեսիոնալ իրավաբան/, այլ նաև փաստաթղթի հասցեատերը: Հեղինակը ստեղծում է տեղեկատվական հաղորդագրություն՝ օրենսդրական բնույթը արտահայտելով, հասցեատերը ընդունում է և մեկնաբանում է տվյալ հաղորդագրությունը: Իրավաբանական տեքստը առնչություն ունի ինչպես գիտական լեզվի, այնպես էլ պաշտոնական-փաստաթղթային ոճի հետ, քանի որ կատարում է և՛ ճանաչողական, և՛ կարգադրողական գործառույթ: Այդպիսի հաղորդակցական առաջադրանք ունեն օրենքները՝ ներառյալ սահմանդրությունը և ենթաօրենսդրական ակտերը, որոնք կարգավորում են հասարակության մեջ օրենքի շրջանակներում մարդկանց շփումը:

Փաստաթուղթը մշտապես պահանջում է ընդարձակ և ծավալուն շարադրանք, որպեսզի գործնական իրավիճակը ընթերցվելիս վերականգնվի ամենայն մանրամասնությամբ և պարզ լինի կարդացողի համար: Իրավաբանական փաստաթղթերում օգտագործվում է հատուկ իրավաբանական տերմինաբանություն: Իրավաբանական տեքստի ճանաչողական և սոցիալական բնույթը արտահայտվում է հայեցակարգային իմաստաբանական միավորներ ստեղծելով, որոնց բաղադրիչները դասակարգվում են որոշակի իրավական մոդելով (Буянова, 2003): Ճանաչողական տեղեկատվությունը դրսևորվում է իրավաբանական տերմիններով, որոնք մենիմաստ են, զուրկ են հուզաարտահայտչական երանգներից, համատեքստից անկախ են, (օրինակ՝ վճիռ, պաշտպանություն, հանցագործություն, արդարադատություն, մեղադրյալ, արդարացնել և այլն): Իրավաբանական փաստաթղթերի օգնությամբ իրավական կարգավորման միջոցները (նորմերը, անհատական որոշումները, համաձայնագրերը և այլն) դառնում են օբյեկտիվացված, հասանելի այլ սուբյեկտների համար, նրանց վերագրվում է պաշտոնական բնույթ, ինչպես նաև հասանելի է դառնում իրավական կարգավորման որոշակիությունը, առանձին անհատների կամայականություններից անկախությունը, և վերջին հաշվով, հասարակական հարաբերությունների կայունությունը, հաստատունությունը, մարդու սոցիալական և իրավական վիճակի ամրությունը:

Բոլոր գրավոր փաստաթղթերի հիմնական գործառույթը հանդիսանում է ոչ արտահայտիչ ազդեցությունը՝ «որոշ արտալեզվական սահմանումների» օգնությամբ և հարկադրանքը՝ որոշակի գործողության, փոփոխության նկատմամբ (Месеняшина, 1996; Черданцев, 1993): Ըստ մեկ այլ տեսության՝ փաստաթղթերի գործառական բնութագրումը կարող է կոչվել որպես հասարակական հարաբերությունների իրավական կարգավորում (Кожина, 1983; Теория гос. и права,, 2000) և պետական կառավարում (Архипов..., 1983; Кокарев, 1979; Кузнецова, Вагенгейм, 1990): Բոլոր փաստաթղթերը կրում են անհրաժեշտ բնույթ, որը հանգեցնում է խոսքում նպատակասահմանվածության իրականացմանը, հրամայական՝ ուժային միջոցով: Ըստ Գ. Ջոլտովայի՝ «հարկադրանքի գործառույթը ավելի ամբողջական և վառ է արտահայտվում շարահյուսական միավորներում, քանի

որ շարահյուսությունը անմիջականորեն կապ ունի մտածողության և հաղորդակցման գործընթացի հետ» (Золотова, 1973; 6):

Իրավաբանական փաստաթղթերի շարահյուսությունը առանձնանում է իր յուրօրինակությամբ, բարդ կառույցներով, բազմազան ոճական հնարներով: Իրավաբանական փաստաթղթերի շարահյուսության մեջ առկա պատճառ և պայման արտահայտող տրամաբանական կառույցների հաճախակի կիրառումը հատուկ ոճական հնար է:

Իրավաբանական խոսույթը, առանձանցվելով ինստիտուցիոնալ հաղորդակցման համակարգում, իր բնույթով թափանցում է հասարակական հարաբերությունների ամբողջ սպեկտրի մեջ: Այն հատվում է, օրինակ, քաղաքական խոսույթի հետ պետական օրենսդրության յուրտում, գիտական և մանկավարժական խոսույթի հետ՝ իրավագիտության յուրտում, գործարարական խոսույթի հետ՝ տնտեսական հարաբերությունների կարգավորման շրջանակներում:

Այսպիսով, իրավաբանական խոսույթը, առանձնանալով իր յուրահատկություններով, հետագա լուրջ հետազոտության կարիք ունի:

Գրականություն

1. Александров, А.С. Юридическая техника Судебная лингвистика -Грамматика права / А.С. Александров // Проблемы юридической техники. Нижний Новгород, 2000
2. Арутюнова, Н.Д. Дискурс / Н.Д. Арутюнова // Лингвистический энциклопедический словарь. М.: Сов. энциклопедия, 1990.
3. Архипов, В.А., Марков, И.П., Соколова, А.Н. Организационно-распорядительная документация / В.А. Архипов, И.П. Марков, А.Н. Соколова. М., 1983.
4. Губаева, Т.В. Прагматика речевого общения в правовой сфере / Т.В. Губаева // Разновидности текста в функционально-стилевом аспекте. Пермь, 1994.

5. Жалинский, А.Э. Профессиональная деятельность юриста. Введение в специальность / А.Э. Жалинский. Учеб. пособ. М.: БЕК, 1997. 312 с.
6. Звегинцев, В.А. Предложение и его отношение к языку и речи / В.А. Звегинцев. М.: Изд-во МГУ, 1976. 307 с.
7. Золотова, Г.А. Очерк функционального синтаксиса русского языка / Г.А. Золотова. М., 1973
8. Карасик, В.И. Языковой круг: личность, концепты, дискурс / В.И. Карасик. Волгоград: Перемена, 2002.
9. Карасик, В.И. О типах дискурса / В.И. Карасик // Языковая личность: институциональный и персональный дискурс: Сб. науч. тр. / Под ред. В.И. Карасика, Г.Г. Слышкина. Волгоград: Перемена, 2000.
10. Карасик, В.И. О категориях дискурса / В.И. Карасик // Языковая личность: социолингвистические и эмотивные аспекты. Волгоград; Саратов, 1998.
11. Кожина, М.Н. Стилистика русского языка / М.Н. Кожина. М., 1983.
12. Кокарев, В.И. Унификация документов управления / В.И. Кокарев. М., 1979.
13. Кузнецова, А.Н., Вагенгейм, Р.Н. В помощь машинистке, секретарю, стенографистке / А.Н. Кузнецова, Р.Н. Вагенгейм. М., 1990.
14. Месеняшина, Л.А. Деловой стиль / Л.А. Месеняшина //Русский язык для делового общения. Челябинск, 1996.
15. Серио, П. Как читают тексты во Франции / П. Серио // Квадратура смысла: Франц. школа анализа дискурса. М., 1999
16. Сиротинина, О.Б. Тексты, текстoidы, дискурсы в зоне разговорной речи / О.Б. СиСтепанов, Ю.С. Константы. Словарь русской культуры / Ю.С. Степанов. М.: Школа «Языки русской культуры», 1997. 824 с.
17. Степанов, Ю.С. Альтернативный мир, Дискурс, Факт и принцип Причинности / Ю.С. Степанов // Язык и наука XX века. М.: РГГУ, 1995
18. Черданцев, А.Ф. Логико-языковые феномены в праве, юридической науке и практике / А.Ф. Черданцев. Екатеринбург: Изд-во УИФ «Наука», 1993.-192 с.
19. Brown, G., Yule, G. Discourse Analysis / G. Brown, G. Yule. Cambridge: Cambridge Univ. Press, 1983. 288 p.

20. Stubbs, M. *Discourse Analysis: The Sociolinguistic Analysis of Natural Language* / M. Stubbs. Oxford: Blackwell, 1983. 272 p.